են. Շուշիում և գավառում՝ 32, Ջիվանշիրում՝ 1, Ջանգեզուրում՝ 1, Կարեհգինում (Ջիբրայիլ)՝ 6: Գործարանատերերը եղել են բացառապես հայեր: 40 գործարանը միասին մշակել են 86,000 փուֆ թաց կամ 28,275 փուֆ չոր բոժոժ: Ստացված թելը արտահանվել է Մոսկվա և Մարսել: Պղնձահանքեր կան Ղարաբաղի բոլոր մասերում: Բայց նրանք մշակվում են Ջանգեզուրում: Լեռնարդյունաբերության այդ ճյուղի ռաիվիան հանդիսացել է հույն Կունդուրովը, որը 1850թ. հիմնել է առաջին գործարանը: Ղարաբաղի շրջանում հանքատեղիները բռնում են 248 դեպիտին տարածություն: Հանքատեղերը հայեր են, հույներ ու ֆրանսիացիներ: Թուրքեր չկան: Պղնձագործարանները միասին արտադրել են 1900թ. 50,000 փուֆ մաքուր պղինձ, իսկ 1914թ.՝ 85,000 փուֆ: Իր այս տնտեսությամբ և տնտեսական զարգացման հեռանկարով հայկական Ղարաբաղը նման չէ թուրքականին, մանավանդ ոչ մի կախում չունի վերջինից: Կախումը նրա մեջ է, որ երկաթուղին անցնում է թուրքական մասով, և այդ մասը կտրելով պիտի հասցնել Կասպից ու Սև ծովը տանող հարմարագույն ուղին: Եթե խոսք կարող է լինել տնտեսական կախման մասին, ապա այս դեպքում թուրքական տափաստանն է, որ շահագրգռված է հայկական Լեռնաստանով և առանձնապես նրա առաջին արտատեղիներով: Ասացինք, որ թուրքը դեռ մասամբ վաչկատուն և թափառական խառնարած է: Ահա այդ խառնարածը միշտ կեր է փնտրում իր հոտերի համար և ամառը ձգելով խանձված տափաստանը՝ չվում է դեպի հայկական Լեռները: Ղարաբաղում ամառային արտատեղիները բռնում են 307,125 դես. տարածություն, որից հարմար օգտվելու համար՝ 246,515 դես., անհարմար՝ 60,610 դես.: Արտատեղիների օգտագործումը կատարվում է համաձայն 1884թ. հունիսի 29-ի օրենքի, ըստ որում խառնարածության հատկացրած այդ վայրերը չեն կազմում որևէ անձի կամ համայնքի սեփականություն, այլ հանդիսանում են պետական հողային ֆոնդ, որ կապարով տրվում է անասնապահներին: Արտատեղիներից 1899թ. օգտվելու են եղել 26038 ծուխ, ըստ որում թուրք՝ 18919, բուրդ՝ 3510, հայ՝ 3408, թաք՝ 201: Առանց երկաթուղի կարելի է ասել, որ այժմ սարեր բարձրացող խառնարածների թիվը պետք է անհամեմատ պակաս լինի, որովհետև թափառական անասնապահությունը իբրև հետամնաց տնտեսական ճյուղ՝ կորցնում է իր գրավչությունը և նպատակահարմարությունը: Հայերն ու քրդերը ապրում են Լեռնաստանում, և արտատեղիները հանդիսանում են հաճախ նրանց հողաբաժինների շարունակությունը: Այնինչ թուրքերը սար են բարձրանում՝ կտրելով հարյուրավոր վերստեր: Այսպես, արտատեղիների հեռավորությունը հայ գյուղերից հետևյալն է. Բռնակոթից՝ 5 վերստ, Ալյաթյանից՝ 3, Դուլուսից՝ 13 վ., Շանթաթից՝ 4 վերստ, Կավարտից, Առաջածորից, Ախտախանայից՝ 6-8 վ.: Թուրքը Բաքվի նահանգի Ջևաթ գավառից Ջանգեզուրի արտատեղիները հասնելու համար Թեթլիա II և Ամիրալար գյուղերից կտրում է 205-235 վերստ, Թեթլիա I՝ 205 վ., Հալաբեյից՝ 210-240 վ., Մուղանլուից՝ 240-265 վ., Հաջի-Քերիմբեկուից՝ 290 վ. և այլն: Այս տարածությունը կտրելով, թյուրք խառնարածը ճանապարհին ոտնատակ է եկել 1856թ.: 1912թ. տվյալներով հայկական Ղարաբաղը ունեցել է 40 մետաքսագործարան 1514 չարխով և 2735 բանվորով: Գործարանները ըստ զավառների ստորաբաժանվել

ՀԱՄԱՄԱՐԿԱՅԻՆ

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈՆԵՍԸ ՈՐՊԵՍ ԱՂՈՐԹԱԳԻՐԸ

Նարեկը ալեկոծությունը մըն է, հոգեկան վրդով մորիկ մը և ալեկոծություն մը, ուր բառերն ու կշռությունները այլքներու բախումին չափակցությունը, անոնց ինքնակրթման շաչումները, անոնց իրարահալած խաղաքքն ու անկումներն ունին...

Ս. Մեծարենց

Միջնադարյան հայ գրականության մեջ նոր դարագլուխը բացվում է մեծագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ: Գեղածիծաղ Վանա լճի հարավային ափերին գտնվող գյուղերից մեկում ծնված բանաստեղծն իր կյանքի վերջին տարիներին գրում է «Մատյան ողբերգության» պոեմը, որը կոչվում է նաև Նարեկ: Պոեմը բաղկացած է իննսուներեց գլուխներից, որոնք վերնագրված են «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Եվ, իրոք, ամբողջ երկը բանաստեղծի սրտի խօսքն է, աղոթքը, ներքին մենախոսությունը՝ ուղղված երկնային տիրոջը:



Իսկ ինչո՞ւ է Նարեկացին իր երկն անվանել ողբերգություն և ինչո՞ւ է ողբում: Նա միտակ է և ըստ միտակական մտածողության, Աստված ամենուրեք է, թե՛ բնության, թե՛ մարդու հոգու մեջ: Բայց մարդն անկատար է, նրա հոգին թաթախված է ծով մեղքերի մեջ, աղտոտված՝ երկրային կյանքի արատներով: Ուստի և աստվածային էությանը հասնելու համար մարդը պիտի անդադար մաքրի իր հոգին աղոթքների, պահքի, ճգնակեցության միջոցով, հրաժարվի մարմնի ցանկություններից, արատներից, մեղքերից: Բայց հնարավոր է դա: Չէ՞ որ մարմնի ցանկությունները չափազանց զորավոր են: Յոգին մարդուն մղում է դեպի վեր, դեպի մաքուր երկինք, իսկ մարմինը քաշում է վար, դեպի երկրային կյանքի կեղտոտ ճահիճը: Այդ հակառակությունից սաստիկ ալեկոծվել է հավատացյալ մարդու ներքնաշխարհը: Այդ ալեկոծումն իր գագաթնակետին է հասել Գրիգոր Նարեկացու հախումն ներաշխարհում՝ վերածվելով մեծագույն տառապանքի, իսկ տառապանքը՝ մեծագույն բանաստեղծության:

Նարեկացին ողբում և աղոթում է ոչ թե իբրև առանձին անձ, մեկ անհատ մարդ, այլ խտացում է իր մեջ ողջ մեղագործ մարդկությանը՝ առանց տարիքային ու դասային խտրության: «Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ», - հայտարարում է նա: Այս է պատճառը, որ նրա ողբն ունի համամարդկային հնչողություն և միաժամանակ մարդասիրական խոր բովանդակություն, քանի որ բանաստեղծի նպատակն է եղել մաքրել, կատարելագործել ողջ մարդկությանը: Եվ քանի որ մաքրվելու համար անհրաժեշտ է խոստովանել մեղքերը, բանաստեղծը թվարկում է մեղքերն ու մարդկային բոլոր արատները:

Այո, Նարեկացին կերտեց իր մատյանը, որը մեր բանաստեղծության Ալթամարա վանքն է, լոկ այն զանազանությամբ, որ մատյանն ան-

կրծանելի է: Մինչև Նարեկացին ոչ ոք աշխարհն այնքան գեղեցիկ ու շքեղ չի տեսել, ոչ ոք այնքան խորությամբ ու ամբողջությամբ չի ընկալել բնության վեհությունը, գոհար վարդերի ու հովտում շողողացող շուշանների սքանչելիությունը, կանաչի ձեռքի ծյունաթույր թովչանքը, կյանքի ու մարդկային հոգու մերձեցումն ու օտարումը: Նա տեսավ, զգաց այս ամենը իր մեծ մտքով, սրտով և համճարով: Եվ որովհետև կյանքը չէր հյուսված միայն գեղեցկությունից, հասարակությունը չէր հիմնված արդարության վրա, բանաստեղծի հոգում ուժճացան զայրույթն ու հիասթափությունն այն ամենից, ինչից բաղկացած էր կյանքը, և ժայթքեց «Ողբերգության մատյան» պոեմը:

Գրքերն էլ ունեն իրենց ճակատագիրը: Մատյանի ճակատագիրը նույնքան անկրկնելի է, որքան իր էությունն ու կերտվածքը:



Լինելով մեր հին գրականության ամենից շատ հրատարակված և ժողովրդի մեջ ամենատարածված գիրքը՝ մատյանը ոչ այնքան կարդացվել է, որքան համբուրվել: Ոչ այնքան որվել դարակի վրա, որքան հիվանդի ճակատին կամ բարձի տակ: Ոչ այնքան հասկացվել է, որքան զգացվել: Եվ զարմանալիս այն է, որ Նարեկացին հենց ինքն էր պատճառը, որ Նարեկացին սրտերը հստակ, բժշկիչ նրանց հոգիները դուրս է հանցանքները սրբիքը:

Նարեկացու կանխագուշակումը կատարվեց, նրա մատյանին հավելով, բախտավորվում է նորապսակը, չքերը լցվում է մայրության ավիշով, լուսավորվում են կույրի աչքերը, ցավագարը լցվում է չարիքներից հաղթելու գործությամբ: Եվ պատահական չէ, որ Նարեկացին ասարկում է որպես մեծագույն տաղերգու, որպես հրաշագործ բժիշկ, որպես մարգարե:

Չայտնի չէ, թե Նարեկացին քանի տարի է ճգնել իր ձեռակերտի վրա, ով գիտե, գուցե այն մտորվել ու գրվել է բանաստեղծի ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում, հայտնի է միայն, որ Նարեկ վանական քերթողը իր եր-

կը ավարտին է հասցրել մահվանից մեկ տարի առաջ՝ 1002թ.:

Բանաստեղծի խոսքն Աստծո հետ զղջում է աղոթախառն: Աստված մի անաչառ դատավոր է, բայց նաև ներող և գթառատ հայր: Մարդը պետք է ձգտի ձեռք բերել բարձրագույն բարիքը, այն է՝ անբաժանելի միանալ աստվածության հետ, որ ամենայն կատարելության լուսատիպն է, և ստանալ աստվածային անդորություն, այսինքն՝ մարդն Աստծու մեջ և Աստված ինքը՝ մարդու մեջ:

Նարեկացին տառապում է անընդհատ մեղքի հետևանքներով, զգում է իրեն հոգով ջախջախված, իբրև խորտակված մի նավ կյանքի ծովում: Եվ այն միտքը, թե իր մեղքերն ավելի շատ են, քան ծովի ավազը, փշաքաղում է նրան: Նա ցավով է նկատում իր և Աստծո տարբերությունը: Որքան Աստված մեծ է, բարձր ու

Պաղատեն, սակայն անտեսես դու ինձ... Ահա և Նարեկացու կործանման ողբը. Կարո՞ղ եմ մեկ էլ ես կանգուն տեսնել Քանդված տաղավարն իմ թշվառ անձի, Կարո՞ղ եմ հուսալ, թե պիտի տեսնեմ Ինձ՝ տարածերժված գերուս ազատված, Ես, որ զոկված եմ լուսիղ շնորհից, Յուսա՞մ, թե պիտի լինեմ կազդուրված...

Նարեկացու տարակույսի մեջ արդեն ցուլարծակում է հույսի լույսը: Նա հավատում է, որ Աստված բարեգութ կլինի մարդու հանդեպ: Չավատում է նաև մարդու ներքին ուժին, որով նա կկարողանա մաքրագործվել: Քանզի մարդը, որ եզակի պատկերն է Աստծո, նախապես, մինչև մեղքերի մեջ թաղվելը, եղել է աստվածաման, ստեղծարար ու մաքուր: Մեղավոր մարդուն անխնայ ստորացնելուց, պարսավելուց ու դատապարտելուց հետո բանաստեղծը գովաբանում է առհասարակ մարդ արարածին: Ահա այդ հատվածը Պ. Սևակի աշխարհաբար թարգմանությամբ.

Ահա մարմինդ կրող ու տանող-երկու միակից ու խորհրդակից ոտքերիդ վրա,

Դու կառուցվեցիր հրեշտակած, Որ կրկնակարկառ քո բազուկներով Իբրև թռչչի երկու բներով վերաբարձրա ցար

Քո հայրենական աշխարհը դիտես...

Սա մարդու գովերգի՝ մարդեղության առաջին փայլուն նմուշն է ոչ միայն հայ, այլ և համաշխարհային գրականության մեջ: Ըստ Նարեկացու, ամբողջ միանալով աստվածային էությանը՝ չի կորցնելու իր ես-ը, ինքնությունը, այլ Աստծո հետ հավասար, անձառելի լույսի մեջ ունենալու է անվախճան փառք. մարդն Աստծո մեջ, և Աստված մարդու մեջ:

Մարդուն տեսնել աստվածացած, այսինքն՝ կատարյալ, անարատ, ամբերի և ազատ: Այս է ահա «Ողբերգության մատյանի» հիմնական գաղափարը:

Այս կատարյալ բանաստեղծական երկը, համամարդկային աղոթքը, ժողովուրդը սրբացրել է և օգտագործել հիվանդների բժշկելու համար: Նարեկացին ինքը զգացել է իր մատյանի համաշխարհային մեծությունն ու արժեքը՝ ասելով.

Ու թեև որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ,

Բայց այս մատյանի հարակայությամբ կմնամ անմահ:

Այո, նա ստեղծեց մի անմահ հուշարձան՝ մինչև այժմ գործող հրաշակերտ եկեղեցի, մի անլռելի զանգակատուն...

Ո. ԲԱՐՍԻՈՂԱՐՅԱՆ «Սարեփանակերտի հ. 2 պետական մանկապարտեզ» ՊՈՒԿ-ի փոխտնօրեն

ՂԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆ. ՂԱՐԱԲԱՂ

3 Իսկ սրան հետևում է կռիվ, ընդհարում, սպանություն և թշնամություն: Կարելի է ասել, թե թուրք ժողովրդի բարքերի կոպտությունը, նրա մեջ արմատացած գողությունն ու ավազակությունն արդյունք են թափառական խաչմարածության: Անշարժ սեփականությունը և ստակեցությունը այնպիսի վարք ու բարք են հաղորդում մարդուն, որ չի կարող պատվաստել թափառաշրջիկությունը, արկածախնդրությունը սարերում ու ձորերում: Թուրք խաչմարածը իր զբաղմունքի գոհն է, թեև շնորհիվ մտավորի սակավակետության այդ չի զգում: Իսկ նրա առաջնորդները՝ Ազերբայջանի գոյության համոզված պաշտպանները, կամենում են իրանց ժողովրդի հետամնացությունը զենք ծառայեցնել հարևան Չայաստանի դեմ ու մշտաբար պահել ազգային կռիվը: Եվ դա այն ժամանակ, երբ Ազերբայջանի տափաստանները ոռոգման, ճանապարհների կառուցման և ճահիճների չորացման հետևանքով կարող են հեշտ ու առատ ապրուստ հայթայթել իրենց բնակիչներին: Այդ շինարար ուղիով չի զարգանում ազերբայջանցիների քաղաքական մտածողությունը, այլ թշնամության ու ներհակության:

Ամառային արոտատեղիները ժամանակավոր դեր են կատարում թուրք ժողովրդի տնտեսության մեջ: Նա վերջիվերջը պիտի սպառի իր սոցիալական կյանքի այդ նախնական ձևը և նստակյաց դառնալով՝ ձեռնամուխ լինի ավելի բարձր տնտեսակերպի ու գոյության պայմանների: Այնինչ ամառային արոտատեղիները անհրաժեշտ են հայ շինականին նախ հագեցնելու նրա հողի ծարավը, ապա զարկ տալու ծայր առնող ալպիական տնտեսության: Ղարաբաղն ու Ջանգեզուրը անցնելով Չայաստանին, չի վտանգվում թուրք ամասնապահների շահը: Չատուկ պայմանագրով նրանք կարող կլինեն շարունակել սարագնացությունը, մինչև որ հետզհետե կվերանա այդ սովորությունը: Բոլոր տվյալները ցույց են տալիս, որ հայկական Ղարաբաղը իր տնտեսական ինքնամոտեցումը պահպանել է միշտ թե՛ պարսկական և թե՛ ռուսական տիրապետության ժամանակ: Քաղաքական և վարչական վիճակն է ստիպել նրան հակվել դեպի այս կամ այն կենտրոնն ու ուղին: Պարսկական տիրապետության ժամանակ թավրիզն էր դեր խաղում, որ Շուշվա առևտրի մեջ պահպանեց իր

կատարյալ, այնքան ինքն ստոր է, թույլ ու չնչին: Մի տեսակ նախանձով է երգում Աստծո լույսն ու մեծությունը, որից չունի ինքը. Դու լույս ես ու հույս, Իսկ ես՝ խավար ու խեղճ. Դու ի բնե բարի ու գովելի, Իսկ ես՝ չար, համակ ու ապիկար. Դու տեր համորեն երկնի և երկրի, Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս, Դու բարձրյալ ազատ՝ կարիքներից զերծ, Իսկ ես՝ ենթակա տաժանքի, վշտի. Դու վեր երկրային կրքերից բոլոր, Իսկ ես՝ կավ, անարգ ու զարշելի... Եվ այսպես անվերջ ու անվերջ ձգվում է սրտառուչ ու ողբազին աղերսանքների շարքը: Դրանց միահյուսվում են բանաստեղծի հոգե-տանջ ապրումները, տագնապները, տարակուսանքները, հուսալքությունն ու հոգեկան ցավերը, գայարուններն ու ջղածումները: Ահա նրա տագնապը.

Չլինի՞, որ ես երկնեմ ձծնեմ, Որքան՝ չարտասվեմ, խորհեմ՝ չհառաչեմ, Ամպեմ՝ չանձրեմ, քայլեմ՝ չհասնեմ Ու ձայն տամ, սակայն դու ինձ չլսես,

թական բարիքներ ժողովելու անհազ տենչը: Թուրքը բոլոր պայմաններում դեմ պիտի լինի այդ տենչին: Կոմունիստ ռուսը արդեն այդ տենչի ուխտյալ հակառակորդն է: Այս հանգամանքը պիտի ստիպե Ղարաբաղ-ցուն «տուն» դառնալ: Մեր ունեցած տեղեկությունները վկայում են այդ դարձը: Ամփոփվել Ղարաբաղում և ելք որոնել դեպի լույս աշխարհ՝ կենտրոնների հետ: Թող Չայաստանը իր տիրապետությունը տարածե թարթառի ավազանի վրա (հին հայկական Ծար գավառ), խճուղի անցկացնի Բասար-Գեջարից Գանձասար-Խաչեն մի կողմից, Բասար-Գեջար-Չաթեր-Մարտակերտ մյուս և այն ժամանակ կտեսնեք, որ կարճ ժամանակում Ղարաբաղը հազար կապերով կծուլվի մայր երկրի հետ և միանգամայն երես կործնի եվլախից ու հաղորակցության մյուս հանգույցներից:

Ազերբայջանի առևտրաարդյունաբերական կենտրոնները ոչ մի գրավչություն չեն կարող ունենալ Ղարաբաղի հայության համար, եթե այդ երկրում պիտի տիրե պարզ կամ կոմունիստ դարձած թուրք կամ թե կոմունիստ ռուսը: Չային Բաքու և Անդրկասպյան երկիր էր մղում մյու-

րի համար Եվրոպան բացվում է թարթառի հովտով, այն ճանապարհով, որով ուրարտացիները Չայաստանից իջել են Կուրի հովիտը: Այդ ճանապարհի բացումը Չայաստանի սեպուխ պարտքն է, ճանապարհ, որ Ղարաբաղի հային կկանգնեցնի Սևանա լճի ափին: Մնացածը կհարթե Ղարաբաղու ձեռներեցությունը և տոկունությունը: Այս փոփոխությունը կկատարվի երկունքով, բայց հեռանկարները պիտի մոռացնել տան ամեն տառապանք:

Ղարաբաղը ամբողջական Չայաստանից դուրս՝ դա խոց է, որ նախ և առաջ զերեզման պիտի իջեցնե անկախ Ազերբայջանի գաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի թունավորե և Չայաստանի անդորրությունը: Եթե Ազերբայջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Չայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան, նրանք օրմիբուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին:

Ղարաբաղը Չայաստանին: «Գիտություն» ամսաթերթ, մարտ, 2020

ԵՐԵՔ ԱՌՈՂՋ

ԱՌՈՂՋԱՐԱՐ ՄԱՐՄԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ. ԲԱՂԱԳՐԱՏՈՄՍԸ ԵՎՐՈՂԱՅԻ ԶԵՄՊԻՈՆՏԻ

Գարուն է, բայց ծնունդ էրկար ու ցուրտ օրերից հետո, սեզոնային սուր շնչառական վարակների եւ տարածվող վիրուսների վտանգի հետ կապված՝ մեր օրգանիզմում կուտակված հոգնածություն եւ սթրես կա: Իսկ սթրեսները եղանակ չեն հարցնում եւ բացասաբար են անդրադառնում մեր օրգանիզմի դիմադրողականության վրա: Այդ է պատճառը, որ առավելապես դժվար է գլուխը բարձից կտրելը: Իհարկե, մեզանից ոչ մեկն ապահովագրված չէ օրգանիզմի ցածր դիմադրողականությունից եւ սթրեսներից: Այդուհանդերձ, փոխելով մեր որոշ սովորություններ, կարող ենք արժանի հակահարված տալ սթրեսներին, հոգնածությանը, ամրացնել օրգանիզմի իմունային համակարգը:

Մարդն ինչքան շատ է շարժվում, այնքան քիչ է հոգնում: Պետք է ավելի շատ ժամանակ տրամադրել քայլելուն, մաքուր օդում զբոսնելուն: Դրական հույզերը՝ ուրախությունն ու ծիծաղը, անփոխարինելի են լարվածությունը թուլացնելու համար: Պետք է պայմաններ ստեղծել ավելի շատ դրական հույզեր ստանալու համար: Ամեն հարմար պահի պետք է մարզել շնչառությունը՝ սովորել խոր եւ դանդաղ շնչել: Չմոռանալ հաճախակի ջուր խմել: Չետել քնի եւ սննդի նորմերի պահպանմանը: Չայտնի է, որ սպորտով կամ մարմնամարզությանը զբաղվողների մոտ առկա է բարձր դիմադրողականություն, սթրեսակայունություն: Այդ մարդիկ գրեթե չեն հիվանդանում: Իսկապես, ցանկացած ֆիզիկական ծանրաբեռնվածություն կարող է թոթափել հոգեբանական լարվածությունը, նպաստել սթրեսների նվազմանը, ամրացնել օրգանիզմը:

Շատ մարդիկ, լսելով ֆիզիկական ակտիվության օգտակարության մասին, պատկերացնում են, որ արդյունքի հասնելու համար պետք է չարչարվել կամ վերջին ուժերը ներդնել որեւէ մարզանք կատարելու համար: Մինչդեռ մարզական էջի հերթական սիրված հյուր, ավանդական կարատե դո Ֆեդերացիայի մարզիչ, Եվրոպայի չեմպիոն Տիգրան Գեորգյանն այլ կարծիք է: Ամենաարդյունավետ մարմնամարզությունը ամենահասարակ վարժություններն են, որոնք կարող են կատարել տարբեր կենսակերպ վարող, ցանկացած տարիքի մարդիկ նույնիսկ տանը կամ աշխատավայրում: Օրվա մեջ 15 րոպեն էլ բավական է վարժություններ կատարելու համար: Կարեւոր է, որ կատարողը գիտակցորեն մոտենա հարցին եւ ճիշտ կատարի այս կամ այն վարժությունը:

Մեր խնդրանքով մարզիչը ցույց տվեց իրար հաջորդող հինգ վարժություն, որոնց ճիշտ կատարումը նպաստում է օրգանիզմի զարթոնքին: Կատարման տեսակետից պարզ, քիչ էներգիա կլանող, բայց արդյունավետ այս վարժություններն օգնում են լիցքաթափվել, հանգստացնել մարմինն ու ուղեղը: Դրանց ամենօրյա կատարումը նպաստում է մկանների ամրանալուն, ձգվելուն, օրգանիզմի դիմադրողականության բարձրացմանը: Իսկ այդ դեպքում շատանում է արյան մեջ ուրախության եւ բավականության հորմոնների արտադրությունը, ինչը խթանում է սթրեսների հանդեպ կայուն լինելուն եւ ընդհանուր օրգանիզմի առողջությանը:

1. Կբանիստը ոչ միայն ուժային սպորտի, այլև ընդհանուր ֆիզիկական պատրաստության հիմնարկ վարժություններից մեկն է: Կատարողը պետք է կանգնած դիրքից կբանիստի եւ բարձրանա՝

նորից ընդունելով կանգնած դիրքը (նկար 1, 2): Ոտքերը բացել ուսերի լայնությամբ, իսկ ձեռքերը պահել առաջ: Լինելով հասարակ վարժություն՝ կբանիստը ակտիվացնում է մկանները, արյան շրջանառությունը ողջ օրգանիզմում: Այն հատկապես լավ է նստակյաց կենսակերպ վարողների համար, քանի որ նպաստում է նստատեղի նյարդի ակտիվ աշխատելուն: Կբանիստի մի քանի անգամ կատարումը նախապատրաստում է հաջորդ վարժությունների համար:



Նկ. 2

տիվ աշխատելուն: Կբանիստի մի քանի անգամ կատարումը նախապատրաստում է հաջորդ վարժությունների համար:



Նկ. 3

Այնուհետև ուղղվել եւ ձեռքերը վեր բարձրացրած ձգվել վերեւ՝ պոկելով կրունկները գետնից (նկար 3, 4): Մի քանի անգամ կատարվող այս վարժությունը կարող է թոթափել սթրեսները, նպաստել սթրեսների նվազմանը, ամրացնել օրգանիզմը:



Նկ. 5

տակար է ողնաշարի հետ խնդիրներ ունեցող մարդկանց համար, հատկապես սկոլիոզի դեպքում: Այն ձգում է ամրացնում է մեջքի մկանները՝ օրգանիզմի հաղորդելով ճկունություն:

2. Կանգնած դիրքից ձեռքերը ամառ պարզած ձգվել ներքեւ՝ ձեռքերը իջեցնել հնարավորին չափ ցած, իսկ ոտքերը պահել ուղիղ: Ոտքերը պետք է բացել ուսերի լայնությամբ:



Նկ. 4

3. Կանգնած դիրքում ոտքերը մոտիկ, ձեռքերը պահել ուղիղ ու մարմնին հավասար թեքվել աջ եւ ձախ կողմեր՝ ձեռքերը չկտրելով մարմնից: Ոտքերն ու վիզը պահել անշարժ (նկար 5, 6): Այս վարժությունը շատ օգտակար է ողնաշարի հետ խնդիրներ ունեցող մարդկանց համար, հատկապես սկոլիոզի դեպքում: Այն ձգում է ամրացնում է մեջքի մկանները՝ օրգանիզմի հաղորդելով ճկունություն:



Նկ. 6



Նկ. 7

4. Ընդունել աղեղնավորի դիրք: Չետելի ոտքի կրունկը բարձր պահել գետնից: Ձեռքերը դնել գոտկատեղին: Մեջքը պահել ուղիղ: Մարմնի կենտրոնը ուղղահայաց պետք է լինի ոտքերի հեռավորության հատվածի կենտրոնին: Ուղիղ իջնել ներքեւ, հետեւի ոտքի ծունկը չհպելով կամ թեթեւ հպելով գետնին, բարձրանալ ելման դիրք (նկար 7-8): Վարժությունը կատարելիս պետք է հետեւել, որ առջեւի ոտքի ծունկն ավելի առաջ չլինի, քան ոտնաթաթը. դրանք պետք է լինեն մեկ ուղղության վրա: Կրկնել մի քանի անգամ՝ փոխելով ոտքերը: Վարժությունն օգնում է ողջ մարմինը պահել տոնուսում:



Նկ. 9

5. Կանգնած դիրքում կատարել ձեռքերի ամբողջական շրջանային պտույտներ դեպի առաջ եւ դեպի հետ: Մի քանի անգամ կատարելուց հետո աջ եւ ձախ ձեռքերը հերթապես անկրատաձեւ մի քանի շարժումով բացելով դեպի հետ եւ հավաքելով դեպի առաջ (նկար 9, 10, 11): Վարժությունը աշխատեցնում է կրծքավանդակը, թիակները, ուսերը, ձգում է հոդերը: Պարբերաբար մարզվեք, եթե անգամ մարզադահլիճ այցելելու հնարավորություն չունեք, հետեւեք ինքնախնամքին, եղեք առողջ:



Նկ. 11

Շնորհավորանք ԲԱՐԵՏԻՂՅ ՈՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ



«Ուսուցիչն այն անհատն է, ով իր շունչը խառնում է հայոց սուրբ հողին ու նմանվում արարողին: Նրա մեջ հորդում է արարչի ուսուցչական լույսը»:

Բարդ, դժվարին, բայց միաժամանակ պատվավոր գործ է ուսուցչի մասնագիտությունը: Նրանք իրականացնում են պատասխանատու առաքելություն՝ ուսուցանում և դաստիարակում են նորանոր սերունդներ:

Աստղաշենի ժան Անդրյանի անվան միջնակարգ դպրոցում է աշխատում հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ավետյանա Մկրտչյանը:

Ծնվել է 1970թ. մարտի 11-ին Ասկերանի շրջանի Աստղաշեն (Դաշքուլաղ) գյուղում:

1977թ. հաճախել է Աստղաշենի ութամյա դպրոցի առաջին դասարան:

1985թ. ուսումը շարունակել է Պատարայի միջնակարգ դպրոցում և այն ավարտել 1987թ.: Եղել է ուսման առաջավոր:

1987թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի լեզվագրական բաժինը: 1988թ. Արցախյան շարժման պատճառով ինստիտուտը տեղափոխվեց ՀՀ Կիրովական քաղաքը:

1992թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի պատմաբանասիրական ֆակուլտետի լեզվագրական բաժինը:

1992թ. աշխատանքի է անցել ՀՀ Ապարանի շրջանի Արագածի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Տեղափոխվել է Արցախ և 1992-1993թթ. աշխատանքի անցել Ասկերանի շրջանի Աստղաշենի ժան Անդրյանի անվան միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, և որպես ՄԿԱԳՏՏ, իսկ 2017-ից առ այսօր աշխատում է որպես փոխտնօրեն: Ավետյանա Մկրտչյանը մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործի ամենացորդ նվիրյալ է:

Հայոց լեզվի և գրականության դասերը միշտ կազմակերպում է ժամանակի պահանջներին համահունչ: Նրա ամեն մի դասապրոցեստ յուրովի ստեղծագործություն է: Իր սաների մեջ դաստիարակում է հայրենասիրություն, աշխատասիրություն և բարություն: Նրա կողմից դպրոցում կազմակերպվող ամեն մի միջոցառում լավագույնն է ու շատ հետաքրքիր:

Իր գուսպ, համեստ ու բարի կեցվածքով, բարեխիղճ ու պատասխանատու աշխատանքով նա արժանացել է գործընկերների և սաների հարգանքին ու սիրուն: Բարձր է պահում ուսուցչի վեհ ու պատվավոր կոչումը:

Սիրելի ուսուցչուհի, շնորհավոր 50-ամյակդ, Ձեզ առողջություն, հաջողություն, երջանիկ տարիներ:

Թող Ձեզ միշտ ուղեկցեն լավատեսությունն ու պատասխանատվությունը, միշտ լինեք բարձունքում:

Աստղաշենի ժան Անդրյանի անվան մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2019Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի «09» մարտի 2020թ. 01 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ՇՈՒՇԻ ԵՏԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԻՄԱՆԱԴՐԱՄԻ 2019Թ. գործունեության մասին

Table with 2 columns: Item description and numerical values. Includes sections for 1. Հիմնադրամի լրիվ անվանումը, 2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը, 3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, 4. Աշխատակազմը, 5. Իրականացված ծրագիրը, 6. Ֆինանսական արդյունքները, 7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը, 8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտի իրականացումը

Ռեկտոր Թորոմայան Հովհաննես, Գլխավոր հաշվապահ «ԱՍԵԹ հաշվապահական կենտրոն» ՓԲԸ



Աուդիտ Պրո ՓԲԸ ԱՍ, ք. Ստեփանակերտի Վ. Մամիկոնյան 29/6

+ 37447 959575 www.auditpro.am

ԱՆՎԱՆ ԱՌՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՇՈՒՇԻ ԵՏԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԻՄԱՆԱԴՐԱՄԻ 2019Թ. ղեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվետվակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՇՈՒՇԻ ԵՏԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԻՄԱՆԱԴՐԱՄԻ ԲԵՐԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՒՆՆԵՐԸ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՇՈՒՇԻ ԵՏԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԻՄԱՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2019թ. ղեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի ղեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀՀՄՍ կանոնագիր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՀՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պարտավորությունները:

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի



հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պարտավորությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածանքային: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:



• ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտքությունը:

• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն ղեպերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

• գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադրություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

20 մարտի 2020թ. «ԱՌՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան Տնօրեն



Ջարինե Վերդիյան Աուդիտոր

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՏԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ

Սկիզբը՝ «Լուսարարի» հ. 6, հ. 7-ում

ՄԿՏ

Սեպտեմբերի 20, կիրակի

Կարճատև զանգից արթնացա: Շտապեցի վեր կենալ: Կիսամերկ վիճակում լվացվեցի, շորերս հագա և շտապեցի ճաշարան: Ճաշարանը չէր փոխված. ամեն ինչ նույնն էր, միայն բուրմունքն էր տարբեր. առավոտյան ճաշարանում օտար թեյի բուրմունք կար:

Մտեցա մատուցարանին, ստացա իմ բաժին երկու տուփ կարագը և մի փոքրիկ պահածոյի նման ջեմ (Մելքոնյանում կարագները փոքրիկ տուփերի մեջ են, ամեն տուփի մեջ՝ մի հացի: Իսկ ջեմը մի քիչ շատ է՝ 2 հացի համար): Այնուհետև բաժակներով կաթ էր դրված՝ սառը, հավանաբար՝ անբնական: Ինչպե՞ս, վերցրի, և մյուս ընկերներով տեղավորվեցինք մի սեղանի շուրջ:

Առաջին անգամից իսկ հավանեցինք այդ կարագի, ջեմի և կաթի համը:

Վերջացնելուց հետո մնացորդները տարանք և թափեցինք: Այնուհետև դուրս ելանք ճաշարանից: Ինչպես ամեն օր, այդ օրը ևս մարդ չկար բակում: Միայն մենք էինք և մի քանի հոգի, որ սովոր էին շուտ արթնանալուն:

Մտանք սենյակ և նստոտեցինք ամեն մեկս իր տեղը և սպասում էինք դպրոցի արթնանալուն:

Մեր սենյակակից Արմենը առաջարկեց խաղալ «Ջրաշքերի դաշտ»: Մենք սիրով ընդունեցինք նրա առաջարկը և սկսեցինք խաղալ: Մի քիչ հետո ծանծաղանք, և ես առաջարկեցի խաղալ «Գորոզիկ» խաղը: Վերջինս ավելի հետաքրքիր դուրս եկավ: Տարված խաղում էինք, երբ հանկարծ հնչեց զանգը: Մենք եզրակացրինք, որ դա ճաշի զանգն է: Եվ առանց ուշացնելու շտապեցինք ճաշարան: Այս անգամ արդեն ամբողջ Մելքոնյանը հավաքվել էր ճաշարանում:

Ծիշում ասած, չեմ էլ հիշում ինչ կերանք այդ օրը: Միայն հիշում եմ, որ ճաշից հետո նարինջ (յուրաքանչյուր ճաշի և ընթրիքի ժամանակ պտուղ են տալիս) կերանք:

Ճաշից հետո չկարողացանք բակում մնալ, կիզից արևը վառում էր մեզ: Ուստի մենք գնացինք և ապաստանեցինք, շենքի մուտքի վերևում դուրս եկած մաս կար, դրա տակ:

Մոտ ժամը 2.00-ին զանգը հնչեց: Այդ մեկը չիմացանք ինչ է: Բայց հետո իմացանք, երբ հերթապահը դուրս եկավ և ասաց.

- Դա ի՞նչ է, անցնի՞ք սերտողության:

Մենք չհասկացանք, թե որն է սերտողությունը: Բայց բառից հասկացանք, որ դա դասերը սովորելու ժամանակն է:

Բայց քանի որ դասագիրք չունեինք, սենյակում պարապ նստոտեցինք: Եվ այսպես մի քանի ժամ անգործ նստեցինք, միայն գրուցում էինք: Զեղծ իմանում, թե ժամանակն ինչպես է անցնում: Միայն հասկացանք այն ժամանակ, երբ հնչեց մի ուրիշ զանգ: Ժամացույցին նայեցինք և տեսանք 6.00-ն է: Իսկույն հասկացանք, որ ընթրիքն է: Լվացվեցինք և շտապեցինք

ճաշարան: Այս անգամ ավելի շատ աշակերտներ կային, քան կեսօրին (լինում է, որ նույնիսկ կեսօրին քնած աշակերտներ են լինում):

Ընթրիքից հետո արդեն համարյա մթնել էր: Օդը սկսել էր պաղել: Մառը գեփյուռ էր փչում: Քանի որ թեթև, ամառային շորեր էինք հագել, շտապեցինք սենյակ:

Որոշ ժամանակ հետո, երբ արդեն ամբողջովին մթնել էր, պատրաստվեցի քնելու:

Պառկեցի, բայց քունս չէր տանում: Գիրք չկար, որ կարդայի: Դեմքս շուռ տվեցի դեպի պատը և մի քիչ հետո զգացի, որ աչքերս ծանրանում են, և ես քնեցի:

Սեպտեմբերի 21, երկուշաբթի

Արթնացա: Արևը բավականին վեր էր բարձրացել արևելքից: Սակայն վաղորդյան այդ բուրբոնյան մեջ մթություն կար: Չիմացա որ զանգը հնչել է: Թոնթորալով վեր կացա և նայեցի ժամացույցիս: Ժամը 7.30 էր: Նորից պառկեցի և քնեցի:

Արթնացա բարձր զանգից: Արագ-արագ շտկեցի անկողինս և 10-15 րոպեից արդեն պատրաստ էի և սպասում էի Առնոլդին:

Ամենօրյա ճաշարանն էր՝ նոր աշակերտներով, դարչինի բուրմունքով (միայն առավոտներն է լինում դարչինի բուրմունքը): Այդ առավոտ չգիտեմ ինչ տվեցին: Ըստ խոհարարների՝ շատ լավ բան էր՝ հավվայի, մեղրի և էլի մի քանի բաների խառնուրդ: Իր տարօրինակությամբ հանդերձ շատ չկարողացա ուտել. քիչ կար (2 հաց) և թեյ խմեցի, և այդքանով վերջացավ իմ նախաճաշիկը:

Դուրս եկանք ճաշարանից և մնացինք նորից անգործ: Ստիպված սկսեցի պտտվել Մելքոնյանի շուրջը:

Մեր ընկեր Միքայելն ասաց, որ ուզում է գալ մեր սենյակը: Բայց մենք ասացինք, որ կարող է պատահել սենյակակից Արմենը չհամաձայնի, և... Ինչ որ է, զննեցինք հերթապահի մոտ: Մեծ եղավ մեր ուրախությունը, երբ լսեցինք, որ հնարավոր է տեղափոխվել: Միակ հարցը մնում էր այն, թե արդյո՞ք Արմենը կհամաձայնվի:

Երկար փնտրտուքից հետո գտանք Արմենին: Երկար չեմուշումից հետո վերջապես համաձայնվեց: Մեր ուզածը կատարված էր:

Կարճ ժամանակից հետո Միքայելը մեր սենյակում էր: Այլևս միայն չէինք:

Միքայելի իրերը դասավորելուց հետո դուրս ելանք բակ: Դրսում բավականին աշակերտներ կային, բայց ամենքը՝ շվաքի տակ. կիզից արևը խանձում էր շուրջը: Չիմացանք արևին և պատասպարվեցինք մուտքի մոտ:

Վերջապես հասավ ընթրիքի պահը: Առանց հապաղելու շտապեցինք ճաշարան: Կուշտ ընթրիքից հետո դուրս ելանք նորից բակ:

Ջահել զույգերը ձեռք ձեռքի տված՝ ձենում էին դեպի մոտակա եղևնուտը, որտեղ նստարաններ կային հավանաբար հատուկ զույգերի համար: Չույգերի մի մասը նստել էր ճաշարանի մոտակա նստարաններին և քաղցր-քաղցր գրուցում էր: Երեկոյան այդ պահը զույգերի՝

իրար հետ լինելու միակ պահն էր:

Մենք էլ մի տեղ նստեցինք (աղջիկները չկային): Աղջամուղջն ավելի էր խորանում: Յուսիսային կողմից (իմ հաշիվներով) պաղ քամի էր փչում: Թփերը թույլ սվսվում էին ծառերի նվազակցության տակ: Պաղ գեփյուռը գրուցում էր մեր ականջներին:

Մեր սենյակակից, նաև մեր ընկեր Միքայելը տրտմուցում էր գլխացավից. խեղճի գլուխը անընդհատ ցավում էր՝ սկսած մեր վայրէջքից: Մի քանի օր լռել էր այն հույսով, որ պառկելով ու հանգստանալով կանցնի: Բայց այժմ նա խնդրում էր, որ գնանք բուժքույրի մոտ, գուցե մի ճար գտնի:

Եվ մենք, առանց ժամանակ կորցնելու, հասանք աղջիկների շենքը: Դարձրվեցինք անելով՝ գտանք բուժքույրի սենյակը: Կարճ ժամանակում գնեց Միքայելին, դեղ տվեց և ասաց, որ բնական է՝ օդի փոփոխությունից է:

Դեղից Միքայելի գլուխը մի քիչ թեթևացել էր, և որոշեցինք մի քիչ էլ մնալ բակում: Քայլում էինք պաղ մթության մեջ և գրուցում: Չեմ ասում, թե անբնականացել խավար էր: Մուտքի լույսը և տեղ-տեղ դրված լուսարձակները լուսավորում և նոսրացնում էին խավարը:

Մտահոգված էինք հաջորդ օրվա դասերի մասին. դեռևս բավական անզլերեն չգիտեինք և չգիտեինք, թե ինչ մակարդակի էին լինելու դասերը: Իսկ Միքայելը, որ իր ասածով քիչ անզլերեն գիտեր (իբր թե դպրոցում քիչ էր անզլերեն անցել), մնալ էր ու քիչ էր մնում լացեր: Բայց ես քաջալերում էի նրան՝ ասելով. «Մի տխրիր ու անհանգստանա: Դու կարող ես սովորել, թեև անզլերեն չգիտես: Մենք եկել ենք այստեղ սովորելու և միայն կսովորենք ամբողջ օրը»: Բայց ես էլ էի մի քիչ անհանգստ դասերի համար: Եվ սիրտս հուզվեց այդ անհանգստությունից: Ուզում էի առանձնանալ և լացել: Բայց ինչ-որ մի բան բկիս դեմ էր առնում և չէր թողնում լացել: Աչքերս ջրակալվել էին, և ես անընդհատ ինչ-որ մի բանի էի նայում՝ ընկերներիցս թաքցնելու համար: Ուզում էի հենց այդ պահին թողնել Մելքոնյանը և գնալ Դարաբաբ: Կարող, մի անհագ կարող, ջրապտույտի պես քաշում էր: Ջրապտույտ, որը բացվել էր օվկիանոսի հատակին և ջուրը քաշում էր դեպի մի փոքրիկ ծով:

Վերջապես արդեն անկողնում էի: Բավական ժամանակ քունս չէր տանում: Ընկերներս արդեն քնել էին: Անկողնում մեջ բավական քավալուններից հետո ընկա Մորփեսի գիրկը:

ԴՊՐՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 22, երեքշաբթի

Նորից զարկեց զանգը, բայց այդ անգամ համեմատաբար ավելի երկար: Նայեցի պատուհանից դուրս: Դրսում վաղորդյան թեթև մթություն կար: Արևը դեռևս չէր ծագած: Նայեցի ժամացույցիս. ժամը 6.20 էր:

Պատի ռադիոյից երաժշտություն էր գալիս. հավանաբար քնածներին արթնացնելու նպատակով: Դա զանգվեցի, լվացվեցի, անկողինս շտկեցի և նստած սպասում էի: Ժամը մոտ 6.50

6:00 - 11:00 Չեչուպ պահ
11:00 - Ջրագծար (Ա, Բ, Գ)
12:00 - Ջրագծար (Դ, Ե, Զ, Է)

Սիրակի
9:00 Նախաճաշի չանգ*
9:00-12:00 - Չեչուպ պահ
12:00 - Անթրոպոլոգ (Ա, Բ, Գ)
1:00 - Ջաշ
1:00-6:00 - Չեչուպ պահ
6:00 - Ներքի
6:00 - 7:30 - Չեչուպ պահ
7:30 - Պարբերաբար սերբոլոգոլոգ (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է)
8:30 - Ֆուսբոլ
9:30 - Ջրագծար (Ա, Բ, Գ)
10:30 - Ջրագծար (Դ, Ե)
11:00 - Ջրագծար (Զ, Է)

Շաբաթ
9:00 Նախաճաշի չանգ*
12:00 Անթրոպոլոգ (Ա, Բ, Գ)
1:00 Ջաշ
1:00-6:00 - Չեչուպ պահ
6:00 Ներքի

հերթապահը բոլորիս կարգադրեց անցնել ճաշարան:

Ճաշարան մտնելուց մի քիչ հետո տղաները և աղջիկները առանձին, ըստ հասակի, շարք կանգնեցինք: Յետո սկսեցին աղոթել: Տարօրինակ աղոթք էր, երբեք չէի լսած: Աղոթքից հետո մոտեցանք սպասարանին և նախաճաշը վերցրինք: Տեղավորվեցինք մի նստարանի և նախաճաշեցինք: Այնուհետև անցանք սենյակները: Նորից հնչեց մի զանգ, և հերթապահը նորից եկավ բոլորիս կարգադրեց անցնել դպրոց:

Դպրոցն իրենից ներկայացնում էր 4 հարկանի շինություն (ընդգրկելով նաև ստորգետնյա հարկը, որտեղ կան բավական դասարաններ և աշխատասենյակներ, որտեղ տարբեր առարկաներից փորձեր են կատարում):

Արտաքին տեսքից դպրոցը նոր էր երևում: Բայց բավական է մյուս կողմի մուտքի վրա գրվածները կարդաս և զարմանաս. շենքը կառուցվել է 1924 թվականին: Բայց դա 75 տարվա շենք չէր երևում:

Մտանք շենքից ներս: Մեզ ցույց տվեցին մեր դասարանը: Ներս մտանք: Սովորական դասարան էր ամեն տեսակետից. պատերը սովորական, հաճախ գրոտված, սեղանները՝ դարաբաղյան ոճով՝ նորից հաճախ գրոտված, ավելի ծիշտ ոչ հաճախ, գետինը պատված էր սալաքարերով, իսկ առաստաղը նույնիսկ չէր սվաղված: Ուշադիր նայում էի՝ ազատ տեղի համար: Մի տղա կանչեց իր մոտ նստելու: Ես սիրով ընդունեցի իրավերը, և տեղս պատրաստ էր:

Ներս մտավ շենքի հերթապահը (ավելի ծիշտ՝ ուռիմ) և բոլորիս կարգադրեց անցնել մյուս շենքի դիմացը: Մենք հետևեցինք մյուս աշակերտներին: Մեր դպրոցից մի քիչ հեռու, ծիշտ մեր շենքի մոտ մի շենք էլ կար: Պետք է անցնեինք:

Երկու շենքերի միջև երկու կիսանդրի կար՝ բարձր պատվանդանի վրա: Ամեն կիսանդրու տակ գրված էր անուն և ազգանուն, ծննդյան և մահվան թվական (բարերարների անունները): Դրանք Մելքոնյանի անմահ բարերարների անուններն էին:

Փայլփլուն տեսք ունեին՝ պատրաստված սև գույնի քարից: Իսկ նրանց շուրջը գտնվում էր մի ծաղկանոց՝ բաղկացած բազմապիսի ու գունազեղ ծաղիկներից:

Աշակերտների ամբողջ հասավ մյուս շենքի դիմաց: Ըստ դասարանների կանգնեցին և երգեցին ՄԿՏ-ի քայլերգը: Այնուհետև անցան դասարաններ:

Առաջին ժամը անզլերեն էր: Ուսուցչուհին թղթեր բաժանեց՝ փոքր քննություններ: Առաջին անգամն էի այդպիսի բան անում՝ անծանոթ և ի՞նչ վար: Մի ամբողջ դասաժամ ոչինչ չարեցի: Ուսուցչուհին բացատրում էր, բայց ոչինչ չէի հասկանում:

Բարեբախտաբար եկավ հերթապահուհին և մեզ (նորեկներին) ուղեկցեց դեպի...

(Այստեղ ուսումնական 1-ին տարվա օրագրային գրառումներն ավարտվում են խմբ.): (շարունակելի)

Շաբաթ
6:20 - Միքայել
6:45 - Նախաճաշի չանգ
6:55 - Չեչուպ
7:00 - Նախաճաշ
7:15 - Պարբերաբար սերբոլոգոլոգ (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է)
7:40 - Պարբերաբար սերբոլոգոլոգ
8:00 - Ջաշ (9 դասաժամից հետո)* (Կրեմ ՇՐ, ԿԳ 4)
2:00 - 5:30 - Չեչուպ պահ
5:30 - Ինթրոդուկցիոն սերբոլոգոլոգ (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է)
6:45 - Ներքի
6:45-7:30 - Չեչուպ պահ
7:30 - Պարբերաբար սերբոլոգոլոգ
8:30 - Ֆուսբոլ (կրակի ժամ)
9:30 - Ջրագծար (վեճիկ պահ) (Ա, Բ, Գ)
10:00 - Ջրագծար (Դ, Ե)
11:00 - Ջրագծար (Զ, Է)

Շաբաթ
6:20 - Միքայել
6:45 - Նախաճաշի չանգ
6:55 - Չեչուպ
7:00 - Նախաճաշ
7:15 - Պարբերաբար սերբոլոգոլոգ (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է)
7:40 - Պարբերաբար սերբոլոգոլոգ
8:00 - Ջաշ (9 դասաժամից հետո)*
2:00 - 5:30 - Չեչուպ պահ
5:30 - 10:00 - Չեչուպ պահ
10:00 - Ջրագծար (Ա, Բ, Գ)
11:00 - Ջրագծար (Դ, Ե, Զ, Է)

Շաբաթ
9:00 Նախաճաշի չանգ*
12:00 Անթրոպոլոգ (Ա, Բ, Գ)
1:00 Ջաշ
1:00-6:00 - Չեչուպ պահ
6:00 Ներքի

ՀԻՄՆԱԳԻՐ՝ «ԼՈՒՍԱՐԱՐ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 27.03.2020թ.: